ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«ՕԳՕ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրում Երևան-Երասխ մայրուղու 18-20 կմ 1/3 հողամասում նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

24.07.2025թ Շահումյան բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. հուլիսի 24-ին, ժամը 12:00-ին Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի Երևան-Երասխ մայրուղու 18-20 կմ 1/3 հողամասում նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի ավագ մասնագետ Խաչիկ Պողոսյանը, Արարատի Մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական ղեկավար Սերժիկ Բաբայանը, «ՕԳՕ» ՍՊԸ-ի տնօրեն Հարություն Մանուկյանը, համայնքի բնակիչներ:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 40 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են

հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում, փակցվել է մարզպետարանի, Արտաշատի համայնքապետարանի շենքում փորձաքննական կենտրոնի և համայնքապետարանի պաշտոնական կայքերում:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները, մշտադիտարկումները:

Այնուհետև Խաչիկ Պողոսյանը հարցադրում կատարեց, որ ըստ հաշվետվության կառուցվելու է հակահրդեհային լողավազան հարևան հողատարածքի վրա, ապա ինչպես են իրականացնելու կոմունիկացիաները:

Գոհար Մինասյանը հավելեց, որ ուշադրություն է դարձվել վերոնշյալ հանգամանքին, նաև ուղարկվել է հաշվետվությունը քաղաքաշինության կոմիտե կարծիքի ստացման նպատակով, ինչի արդյունում դիտողություններ, առաջարկություններ չեն եղել, պարզաբանեց որ հաշվի են առել նաև, որ ընկերությունը նաև ունի 10խմ ծավալով հակահրդեհային լողավազան և 4 ռեզերվուար տարածքում: Ընկերության ներկայացուցիչ Հարություն Մանուկյանը պարզաբանեց, որ նորմով սահմանված է 40մ հեռավորություն, ինչը պահպանել են:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ «ՕԳՕ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի Երևան-Երասխ մայրուղու 18-20 կմ 1/3 հողամասում նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

«ՕԳՕ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հարություն Մանուկյան